Նորություններ

Հայաստանը պատրաստ է հայ-թուրքական գործընթացի զարգացման հնարավոր սցենարներին. Սերժ Սարգսյան

Սերժ Սարգսյանը վերջերս այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որտեղ ներկա է գտնվել Հայ առաքելական եկեղեցու թեմական ներկայացուցչական ժողովին. հայտնում է ՀՀ նախագահի մամուլի ծառայությունը:

Երկրի ղեկավարը ողջունել է ժողովի մասնակիցներին և հաջողություն մաղթել Հայ առաքելական եկեղեցու բոլոր ձեռնարկներին, որոնք ուղղված են մեր երկրի ու հայության հոգևոր կարիքների բավարարմանը:

Նախագահը բացառիկ կարևոր է համարել յուրաքանչյուր հայ քաղաքական գործչի, առավե՛լ ևս՝ Հանրապետության նախագահի համար Հայ եկեղեցու գործունեությունը Սփյուռքում:

«Դա հայությանը միավորող ամենահուսալի շաղախն է: Միասնական արմատների, միասնական նպատակների, ընդհանուր մարտահրավերների և մանավանդ ընդհանուր ապագայի մասին եկեղեցու պատգամն ու հորդորը նոր ոգի են հաղորդում արտերկրի մեր քույրերին ու եղբայրներին և կարող են թևավոր նույնիսկ հուսահատվածներին: Ողջ հայության միասնական կեցվածքը ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական մեծ կապիտալ է: Անթույլատրելի է այդ կապիտալը մսխել ոչ սկզբունքային հարցերի շուրջ ծագած վեճերում», - ընդգծել է նա:

Սերժ Սարգսյանը, պարզաբանելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը, ևս մեկ անգամ ընդգծել է, որ այն որևէ կերպ չի նշանակում հրաժարում Ցեղասպանության միջազգային ճանաչման ջանքերից:

Նախագահն ասել է, որ ստորագրված արձանագրությունների վավերացումը և առանց նախապայմանների ու ողջամիտ ժամկետներում հարաբերությունների հաստատումը պաշտպանում է նաև լայն միջազգային հանրությունը: Սերժ Սարգսյանը նաև ընդգծել է, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացի հնարավոր սցենարների առնչությամբ Հայաստանն ունի իր ռազմավարական ու մարտավարական պատկերացումները, և համապատասխան զարգացումներից ելնելով, կձեռնարկի համարժեք քայլեր:

Ռուսական ներդրումները կարդարացվեն միայն հայ-թուրքական սահմանի բացման դեպքում

Ռուսաստանն արդեն վաղուց է սկսել քայլեր ձեռնարկել, որոնք ցույց են տալիս, որ նա իրավիճակի փոփոխություններ է ակնկալում Կովկասում: Նման կարծիք է հայտնել Հարավային Կովկասի հարցերով Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Փիտեր Սեմներին:

Նրա խոսքերով՝ Հայաստանում կատարվող ռուսական ներդրումները, երկաթգծի շինարարությունը, իրենց կարդարացնեն միայն այն դեպքում, եթե բացվի հայ-թուրքական սահմանը:

«Ռուսաստանը մեծ շահեր ունի Հայաստանում, այդ թվում նաև ահռելի տնտեսական շահեր: Եթե Ռուսաստանը միջոցներ է ներդրել Հայաստանում, գնել է էներգետիկ ենթակառուցվածքը և այլն, ապա նա շահագրգռված է Հայաստանի տնտեսության զարգացմամբ: Իսկ կայուն զարգացման համար անհրաժեշտ պայմաններ է հարկավոր ստեղծել, որի համար ամենակարևոր գործոնը Թուրքիայի հետ սահմանի բացումն է: Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացումը և դրան զարգացման ընթացք տալը նույնպես բխում է Ռուսաստանի շահերից», - պարզաբանել է Սեմներին:

Наиболее употребительные слова и выражения. Русский текст, литературный текст и диалект

Еле – еле – ми кэрп, hазив hаз – джоров – моров
Если – етэ – эгер
Еще – дэр – таhа
Жадный – агаh, ачкацак – хызханч
Жалеть – хыхчал, апсосал – мэхкынал, туфтуфал
Жалить – хайтэл, кцэл – гыджэл
Жалкий – хэхч, вохормэли – хэхич
Ждать – спасэл – сабр анэл
Желание – цанкутюн – мурад
Жениться – амуснанал – гарквэл
Живость – кэнданутюн – харалти
Забыли – морацэл эн – морцил ин
Забыто, забывать – моранал – морнал
Завернуть – пататэл – лозэл
Заживать – арохчанал, лаванал – ахэг ылал
Закончить – авартэл – хасэл
Заканчивать – верчацнэл – халсэл
Закусить – нахачашэл – хавалти анэл
Замолчать – лрел – сус ылал
Западня – такард – тузах
Заход (солнца) – арэвамут – арэвы мармуднэл
Зерно – hацаhатик – абранк
Здесь – айстэх – hос
Из года в год – тарэц тари – дарэц дари
Из стороны в сторону – ми кохмиц мюс кохмы – бадэ бад
Искать – пынтрэл – пындырэл
Испортить – пчацнэл – ёх анэл
Испугаться – вахэнал – вахэнал, уруф ылал
Кажется – твум э – ачэп
Кататься со смеху – цицахиц туланал – джартвэл хындалэн
Колокол – занг – чанг
Колокольня – зангатун – чангадун
Конечно – аншушт, иhаркэ – hэбэт
Красавица – гэхэцкуhи – дэсок ахчиг
Левый – дзах – соли
Ленивый – цуйл – тэмбэл, осал
Лес – натар – мори
Лично – андзамб – инкы
Лишиться – зырквэл – хасэл, халсэл
Мимо – мотов, кохкиц – ковэн
Можно – карэли э – гла, Минкин э
Мозг – ухэх – мин
Много – шат – номай
Мягкий – папук – гагох
Надежда – hуйс – умэт
Надеяться – hуйс днэл – шамиш ылал
На днях – мот орэрс – мэгормэн
Наконец – вэрчапэс – энчамы
Напрасно – изур – ботэн дахы

Использован материал из книги А.Г. Малхасяна «Русско–армянский разговорник», Ростов–на–Дону, 2008г.

ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ

Է.

«Երանի նրանց, ովքեր հալածվում են արդարության համար, քանզի նրանցն է երկնքի արքայությունը»

Այս երանին չի խոսում նոր աստիճանի մասին, քանզի չկա ավելի բարձր պարգև, քան Աստծո որդի կոչվելը: Այս է վկայում ութերորդ և առաջին երանիների խոստացած պարգևների նույնությունը, ինչպես նաև մեկ և ութ թվերի խորհրդաբանությունը և այլն: Սա վկայում է նաև այն մասին, որ երկնքի արքայությունը բազմաստիճան և բազմանշանակ խոստում է, և մարդկային մտքի համար անհասանելի է այն, ինչ պատրաստել է Աստված Իրեն սիրողների համար:

Ովքեր մեղքից հեռանալով, ապաշխարելով, ճգնություններով, առաքինասիրությամբ, բարեգործությամբ, սրտի սրբությամբ հասել են խաղաղության աստիճանին, նրանք պետք է պատրաստ լինեն փորձությունների և հալածանքների: Հոգևոր կյանքի մեջ կարևորագույն պահ է հավատքի վկայությունը, և հենց հալածանքների մեջ է փորձվում մարդու հավատքի զորությունը: Նախ հալածանքների ենթարկվեց Ինքը մեր Տերը՝ ասելով. «Եթե Ինձ հալածեցին, ապա և ձեզ պիտի հալածեն» (Հովհ. ԺԵ 20): Ովքեր դարձել են Աստծո որդիներ՝ ըստ շնորհի, նրանք պետք է մասնակից դառնան Միածին Որդու մարդեղության խորհրդին՝ նախ և առաջ կցորդ լինելով այն հալածանքներին ու վշտերին, որ Նա կրեց մեր մեղքերի համար: Բոլոր առաքյալները, նահատակները և սուրբերը մեծագույն պատիվ էին համարում մեր Տիրոջ պես հալածանքների ենթարկելը:

Հայրերն ասում են, որ ճշմարիտ առաքինությունն ոչ թե ինքնին բարիք գործելն է, այլ համբերելն այն փորձություններին, որոնք հաջորդում են բարեգործությանը: Հավատքի համար հալածանքների մեջ է ի հայտ գալիս հոգևոր կյանքի խորությունը և թրծվում հավատքի ամրությունը, և ովքեր փախչում են վշտերից, նրանք փախչում են Աստծուց: Հայրերը վկայում են, որ վշտերի ու նեղությունների մեջ կա մի երկնային ուրախություն և երանություն, որին հասնում են բոլոր աստվածահաճո սուրբերը և վկաները:

«Գանձասար» աստվածաբանական կենտրոն

Հրեայի որդին

Տիեզերական Անին փառապանծ քաղաք էր, երկհարկանի. բոլոր հարուստ շուկաները գտնվում էին ներքնահարկում, բնական և արհեստական թունելներում, բնական և արհեստական լուսավորություններով, ապահով պահակախմբերով, արևելքի և արևմուտքի առևտրի զարգացնող հանգույց, հազարից ավել եկեղեցիներով, կուլտուր-լուսավորչական կենտրոններով...

Լեո

Անին հարուստ էր նաև ժողովրդական իմաստուն պատումներով և զրույցներով: Ստորև ներկայացնում ենք այդ ուսանելի զրույցներից մեկը:

Տիգրան Հոնենցը, որ Տիեզերական Անիի մեծահարուստներից էր, ուներ բազմաթիվ խանութներ, ջրաղացներ, ձիթհանքեր, իր անվան երկու եկեղեցի ու դղյակ, բայց իրեն շատ դժբախտ էր համարում: Արդեն ծերության շեմն անցել էր, բայց ժառանգորդ չուներ: Գիշեր ցերեկ աղաչում էր երկնային զորությանը մի որդի պարգևել, որ իր կյանքը շարունակեր, ունեցվածքը բարի գործերի վրա ծախսեր: Աղոթում էր, սակայն ո՛չ մի հույսի նշույլ էր երևում, ո՛չ՝ արդյունքի: Հուսահատությունը նրան ավելի է ճզմում, երբ կինը վախճանվում է: Իսկապես թշվառանում ու որոշում է թեկուզ և վշտահար գնա սուրբ քաղաք՝ Մեքքա, ուխտի, գուցե Տերը փրկության մի դուռ բաց անի: Խելացի մարդկանց խորհրդով ողջ ունեցվածքը վաճառում է, վաճառքից ստացված ոսկին լցնում մի տակառի մեջ, վրան աղով ծածկում՝ մտածելով, որ աղը էժան է, ձեռք տվող չի լինի: Փնտրում, գտնում է ազնվությամբ հռչակված մի հրեայի ու, տակառը տանելով նրա մոտ, ասում է.

- Ո՛վ Աստծո բարեհամբավ մարդ, ճակատագրից վշտահար տուժված եմ: Որոշել եմ սուրբ քաղաք ուխտի գնալ: Ոչ ոք չունեմ, վերևում Աստված, ներքևում դու: Իմ ողջ ունեցվածքը՝ այս տակառ աղը, քո տնօրինությանն եմ հանձնում: Վերադարձիս կփոխհատուցեմ:

- Ո՛վ հավատացյալ, տակառում թեկուզ ոսկի էլ լցված լինի, սրբազանությամբ կմնա: Բարով գնաս, բարով վերադառնաս: Ուխտդ բարերար թող ազդի հոգուդ, իսկ ես իմ ազնվության աստիճաններն ավելի կբարձրացնեմ:

Ու դժբախտ Տիգրանը ճանապարհ է ընկնում: Ուղևորությունը երկար ու դժվար է լինում: Վեց ամիս անց վերադառնում է հուսահատ, շտապում հրեայի մոտ, դիմացն է ելնում նա ու բարեժպիտ ողջունում.

– Օ~, բարով եկար ուխտավոր եղբայր, երևում է, որ Տերը հոգիդ կազդուրել է,- ասում է հրեան: - Ահա քո տակառը, ինչպես որ դրել ես անկյունում: Նրա կողմը աչք թեքող չի եղել, թեպետ աղը շատ թանկացավ, բայց ես աստվածապաշտ և անաղարտ մնացի:

Բայց ինչ, Տիգրանը տուն է տանում տակառը, բաց անում և գոռում.

– Վա~յ, անաղարտ թալանչի, ինձ իսկապես թշվառացրիր անգութ ավազակից վատթար: Հետ է վազում, բռնում հրեայի կոկորդից, քաշքշելով դեսուդեն անում և ասում.

– Ճակատագրիս հարվածները քի՞չ էին, որ դու անգթությամբ բազմապատկեցիր, տո՛ւր իմ ոսկին, թե չէ քեզ աղցան կդարձնեմ:

Հրեան օգնության է կանչում մարդկանց.

- Ժողովո՛ւրդ, օգնեցեք, էս մարդը ուխտի է գնացել, փոխանակ խելոքանալու, խելագարվել է: Գնալիս տակառով աղ է տվել, վերադառնալիս ոսկի է պահանջում:

Մի քանի հոգի հավաքվում են, հրեան ասում է.

- Ժողովո՛ւրդ, հարցրեք իսկությունը և ինքներդ դատեցեք: Մի հաղթանդամ դատավոր հարցնում է.

- Դու ի՞նչ ես տակառով պահ տվել:

Տիգրանը մոլորվում է: Նախ ճշմարտությունից չշեղվելով ասում է.

- Ես տակառը ոսկի եմ լցրել, միայն վրան եմ աղով ծածկել:

Բայց ամանաթդ ի՞նչ անվամբ ես պահ տվել. ա՞ղ, թե՞ ոսկի:

- Որպես աղ, - կարկամած ասում է Տիգրանը:

Հավաքվածների մի մասը ծեծում են կիսացնոր Տիգրանին, մյուս մասը խորաթափանց զգացումով է մոտենում և խրատում:

- Ո՛վ թշվառական, հրեան քո հավատը ոտնատակ է տվել, օգտվել է քո միամտությունից, որ հանձնել ես իբրև աղ: Աղը երբ թանկացել է, բաց է արել, ոսկին տեսել, գանձը դատարկել և աղ է լցրել տեղը: Ներկայիս փաստով ուր էլ գնաս, ում էլ դիմես, անկարող կլինես կորուստդ վերագտնել: Լավ է գնաս և գտնես այն իմաստունին, որը համարժեք պատժամիջոց կստեղծի, որով դու բարեհամբավ գայլին ծնկի կբերես ու կորուստդ կվերագտնի: Էս խաժամուժից և չար բարեպաշտից լոկ նախատինք կստանաս: Հավատով գնա, հույսով փնտրիր:

Ու վհատված Տիգրանը քայլերն ուղղում է այն Տիրոջ ուղղությամբ, որը գիտի իր անմեղությունը ու կօգնի իրեն համազոր պատժով ծնկի բերել անողորմ ագահին: Բայց ո՞ւր և ինչպե՞ս...

(շարունակելի)

Հրանտ Սարգսյան